

գնացքի օրինակը.- «գնացքիդ հասնելու համար, հարկ է որ հիմա ճամ-բայ ելլես»։ Կամ «ջութակ լաւ նուագելու համար, պէտք է օրական փորձ ընես»։

Այնուհետեւ Կանտ կը հաստատէ, որ միայն մէկ «ինքնին» նպատակ կայ, որ *մարդն* է։ Միայն բանականութեան տէր մարդն է, որ ինքնանպատակ գոյութիւն ունի եւ երբեք որպէս *միջոց* շահագործուելու է, թէ՛ մարդը ինքն իր նկատմամբ եւ թէ ուրիշ մարդոց նկատմամբ։ Կանտի համաձայն, քանի որ մարդը ազատութիւն ունի, ուրեմն նաեւ արժանապատուութիւն ունի, որ եր-բեք թոյլ չի տար որպէս *միջոց* իր անձի շահագործումը։ Անշուշտ որ, մարդոց պարագային, կարելի չէ բոլորովին ձերբազատիլ զանոնք որպէս *միջոց* օգտագործելէ, սակայն երբ մարդը որպէս *միջոց* օգտագործեմ, պէտք է իմ անձնական կանոնը (մաքսիմ) մարդու արժանապատուութեան համապատասխանէ, առանց զայն նուաստացնելու։ Արդէն բանաձեւին մէջ կը յիշուի՝ «երբեք լոկ որպէս *միջոց* օգտագործես» արտայայտութիւնը, ուր պէտք է նկատի ունենալ «լոկ» (=միայն) եզրի գոյութիւնը։

4. Ինքնավարութեան Բանաձեւը

«Այնպէս վարուէ՛, որ կամքը իր անձնական կանոնի (մաքսիմ) միջոցով, ինքզինք միաժամանակ որպէս ընդհանուր օրէնսդիր նկատել կարենայ»։

Կանտի բանաձեւի այս չորրորդ տարբերակին մէջ վճռական դեր կը խաղայ մարդկային *կամքի ինքնավարութիւնը*։ Կանտի համաձայն, սա կը նշա-նակէ, որ իմ կամքը ինքնավար ըլլալու կարողութիւն ունի եւ ես կրնամ որոշել ու վարմունքի բազմաթիւ կարելիութիւններէն բարոյական ճիշդ վարմունքը ընտրել։ Այլ խօսքով, իմ ինքնավար կամքը կը դառնայ ընդհանուր օրէնսդիր կամք մը եւ ես կը կամենամ ընել, ինչ որ պէտք է։

Ինքնավարութեան կամ ինքնօրինութեան (Autonomy, յուն.՝ nomos = օրէնք) հականիշն է՝ այլօրինութիւնը (Heteronomy), որ մեզ կ'առաջնորդէ դէ-պի *ենթադրական հրամայական* եւ ենթակայական նպատակադրում. այս պարագային ես պէտք է բան մը ընեմ, որովհետեւ այլ բան մը կը կամենամ։ Արդարեւ ընթացք մը, որ երբեք չի համապատասխաներ *անպայմանական հրամայականին* (Categorical Imperative) կամ *բարոյական օրէնքին* (Moral Law)։

5. Նպատակներու Իշխանութեան Բանաձեւը

«Այնպէս վարուէ՛, որ դուն անձնական կանոնի (մաքսիմ) միջոցով, երբեիցէ օրէնսդիր մարմին դառնաս՝ նպատակներու ընդհանուր իշխանութեան մէջ»։

Կանտի բանաձեւի այս հինգերորդ ու վերջին տարբերակին մէջ եւս, վճռական դեր կը խաղայ մարդկային *կամքի ինքնավարութիւնը*, որու միջոցով նաեւ *օրէնսդիր մարմին* ըլլալու հանգամանքը։ Կանտի համաձայն, սա կը նշանակէ, որ մարդը եւ իր մերձաւոր անհատները, նպատակներու ընդհանուր